| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 27 | Նոյեմբեր | 2018 թ. |
| [4] Մատուցման ամսաթիվը | | |
| 27 | Նոյեմբեր | 2018 թ. |

# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 9233954354 |

Ճշգրտվող հաշիվ վավերագրի

| Սերիա | Համար |
|---|---|
| | |

Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

**Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի**

| | | |
|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 2 6 3 6 7 8 1 | |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [10] Անվանումը | «ԱՎ ԷՔՍՊԵՐՏՍ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) | |
| [11] Բանկային տվյալները | Արդշինբանկ | N 2470103343210000 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ԹԻՎ 48 | |
| [13] Լրացուցիչ տվյալներ | | |

**Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի**

| | | |
|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 | |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | |
| [17] Բանկային տվյալները | | N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |
| [19] Լրացուցիչ տվյալներ | | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| NN C/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ քանակը | Միավորի գինը | ԱԱՀ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | թիվ 28157117 քր գործով դատահաշվապահական փորձաքննություն | հատ | 1 | 250000 | | 250000 |
| Ընդամենը | | | | | | 250000 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GRIGORYAN NAREK 1514930757

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

27/11/2018 20:28:29

# Ո Ր Ո Շ Ու Մ

Դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին

« 19 » հունվարի 2018 թ. քաղ. Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության մայոր՝ Ա. Ս. Իգիթյանս, քննարկելով վարույթիս թիվ 28157117 քրեական գործի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017 թվականի հոկտեմբերի 30-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ-ից թիվ 10/1-1-4472 գրությամբ ստացվել է 1-ին վարչության պետի տեղակալ, առաջին բաժնի պետ ոստիկանության գնդապետ՝ Գ. Նիկողոսյանի զեկուցագիրը՝ Շիրակի մարզի Փոքր Մանթաշ համայնքի ղեկավար՝ Ժիրայր Ռազմիկի Հակոբյանի կողմից մի շարք ապօրինություններ կատարելու վերաբերյալ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Արթիկ քաղաքի Դուրյան փողոցի 5-րդ տան բնակչուհի՝ Լուսիկ Սամվելի Քարտաշյանը ոստիկանության Արթիկի բաժնում հաղորդում է տվել, որ 2015 թվականին քամու հետևանքով Փոքր Մանթաշ համայնքի տուժած բնակիչների տների տանիքները վերանորոգելու համար համայնքի ղեկավար Ժիրայր Հակոբյանը և աշխատակազմի ղեկավար՝ Գագիկ Հակոբյանը, նախնական համաձայնության գալով, իրենց պաշտոնական դիրքն օգտագործելով, ՀՀ Կառավարության կողմից, որպես վնասի փոխհատուցում, ներկայացված ցուցակում նշված անձանց տների տանիքները վերանորգելու նպատակով հատկացվել է 3.400.000 դրամ գումար, որը տնօրինվել է վերջիններիս կողմից, իսկ տուժած բնակիչներին, որպես վնասի փոխհատուցում 500.000 դրամ գումար փոխանցվել է համայնքի բյուջեից, բացի այդ համայնքապետարանի պաշտոնատար անձիք կազմել են ստացված գումարը բնակիչներին հանձնելու փաստը հաստատող, իրավունք վերապահող կեղծ փաստաթղթեր, որոնցում կեղծվել են համայնքի բնակիչների ստորագրությունները:

Դեպքի առթիվ 2017 թվականի հոկտեմբերի 31-ին ոստիկանության Արթիկի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 314-րդ հոդվածով հարուցվել է թիվ 28157117 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժին, կատարվում է նախաքննություն:

Քրեական գործով առգրավվել են Շիրակի մարզի Փոքր Մանթաշի համայնքապետարանի իրավաբանական անձի պետական գրացման վկայականի, ավագանու և աշխատակազմի ղեկավարի կանոնադրությունների, համայնքի ղեկավարի որոշումների մատյանների, ավագանու որոշումների մատյանների, դրամարկղային գրքերի, աշխատավարձերի և դրամական օգնությունների վճարային տեղեկագրերի և հաշվապահական գործերի, գյուղապետարանի աշխատակազմի, «Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատության», «Փոքր Մանթաշի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների հաստիքացուցակների և պաշտոնային դրույքաչափերի, «Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատության», «Փոքր Մանթաշի արվեստի դպրոց»

համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների աշխատավարձերի վճարային տեղեկագրերի, դրամարկղային գրքի և հաշվապահական գործերի բնօրինակները:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատահաշվապահական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի հիմք ընդունելով շարադրվածը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-րդ, 244-րդ, 245-րդ և 248-րդ հոդվածներով.

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. 28157117 քրեական գործով նշանակել դատահաշվապահական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «ԱՎ Էքսպերտս» ՍՊԸ-ի մասնագետներին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ 2015 թվականից մինչև 2016 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ Շիրակի մարզի Փոքր Մանթաշի համայնքապետարանի, «Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն»-ը, «Փոքր Մանթաշի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառման գործունեությունը ծավալվել է Հայաստանի Հանրապետությունում ոլորտը կարգավորող, գործող օրենսդրության համաձայն, թե ոչ, եթե ոչ, ապա ի՞նչ խախտումներ են թույլ տրվել, ե՞րբ և ու՞մ կողմից,

բ/ 2015 թվականից մինչև 2016 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ Շիրակի մարզի Փոքր Մանթաշի համայնքապետարանի, «Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն»-ն, «Փոքր Մանթաշի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից ֆինանսական խախտումներ թույլ տրվել են թե ոչ, եթե այո, ապա ի՞նչ խախտումներ են թույլ տրվել, ե՞րբ, ու՞մ կողմից, ի՞նչ չափով, դրանց արդյունքում պետությանը կամ կազմակերպությանը վնաս պատճառվե՞լ է, թե ոչ,

գ/ 2015 թվականից մինչև 2016 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ Շիրակի մարզի Փոքր Մանթաշի համայնքապետարանի, «Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն»-ն, «Փոքր Մանթաշի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից տարիֆիկացիոն ցուցակները ճիշտ են կազմվել, թե ոչ, ֆինանսական խախտումներ առկա են, թե ոչ, եթե այո, ապա արդյունքում պետությանը կամ կազմակերպությանը վնաս պատճառվել է, թե ոչ, եթե այո, ապա ի՞նչ չափով և ու՞մ կողմից,

դ/ որքա՞ն է կազմել 2015 թվականից մինչև 2016 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ Շիրակի մարզի Փոքր Մանթաշի համայնքապետարանի բյուջեն, այն ինչպե՞ս է բաշխվել, դրամարկղը և բանկային հաշիվներն ինչպե՞ս են տնօրինվել, արդյոք հաշվապահական ձևակերպում ստացել են, թե ոչ ի՞նչ խախտումներ են թույլ տրվել:

ե/ 2015 թվականից մինչև 2016 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ կողմից Շիրակի մարզի Փոքր Մանթաշի համայնքապետարանի, «Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն»-ը, «Փոքր Մանթաշի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից չհիմնավորված ծախսեր կատարվե՞լ են, թե ոչ, եթե այո, ապա որքա՞ն և ի՞նչ նպատակով, այդ ընթացքում ի՞նչ խախտումներ են թույլ տրվել:

3. Փորձաքննության ընթացքում եթե կառաջանան այլ հարցեր, որոնք որոշման մեջ ներառված չեն եղել, սակայն դրանց պատասխանը մտնում է փորձագետի իրավասության մեջ ու դրանց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար՝ խնդրում եմ պատասխանել նաև այդ հարցերին:

4. Հետազոտման նպատակով փորձագետին տրամադրել 2015 և 2016 թվականների Շիրակի մարզի Փոքր Մանթաշի համայնքապետարանի, «Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն»-ը, «Փոքր Մանթաշի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահական փաստաթղթերը, դրամարկղի գիրքը, քրեական գործի նյութերը սքանավորված տարբերակով, իսկ անհրաժեշտ այլ փաստաթղթերը կտրամադրվեն լրացուցիչ:

Ավագ քննիչ՝ **Ա. Ս. ԻԳԻԹՅԱՆ**